



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Այս աշխատանքը արտաևազրկած է «Առևտյագործական նամակացներ»  
ոչ առևտրային իրավասարյան 3.0» արտաևագրավ

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պարունակած տարրերը դժվար ճանաչություն կամ սահմանափակություն չեն կազմում  
մերժություն կամ օգտագործություն առնելու ստուգու համար նույն

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format;  
Adapt — remix, transform, and build upon the material

1002-6

Ա. ԲԵՐԵԶԻՆ

ՅԵՐԿՐԱՋԱՐՁԸ

==== ՅԵՎ ՆՐԱ =====

ՊԱՏՇԱՐՆԵՐԸ

ԹՐՈՅՔԵՍՍԱՐ ԼԵԲԵԴԵՎԻ

ՀԱՌԱՋԱԲԱՆՈՎ

1926

ԼԵՆԻՆԱԿԱՆ



Ա. ԲԵՐԵԶԻՆ


Թ 550.34

ՅԵՐԿՐԱՋԱՐԺԸ  
===== ՅԵՎ ՆՐԱ =====  
ՊԱՏՃԱԱՆԵՐԸ



ՊՐՈՖԵՍՍՈՒՐ ԼԵՖԵԴԵՎԻ

ՀԱՌԱՋԱԲԱՆՈՎ



ԼԵՆԻՆԱԿԱՆ

Գրառելվար № 630. Պատվեր № 231. Տիրաժ 3500

Գևորգասի ԱՎ տպարան Լենինականում

## ՀԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Լեռնային վորոշ վայրերում ժամանակ առ ժամանակ տեղի յեն ունենում յերկրաշարժեր, ինչպես և բնության ավելի ահեղ յերեսույթներ – հրաբխային ժայթքումներ (վուկանիզմ), վորոնք դեպի իրենց են գրավում մարդու ուշադրությունը և պահանջում զիտական բացատրություն։

Կան վայրեր, ուր յերկրաշարժերը և հրաբխային գործունեյությունը կատարվում են միաժամանակ, վորն ապացույց ե յերկրի կեղեի խորքերում տեղի ունեցող բնության ինչ վոր հախուռն յերեսույթների և նրա, վոր յերկրագնդի կեղեի վերջնական ձևավորումը դեռևս չե վերջացել։ Այդպիսի շրջաններին պատկանում ե որինակ՝ Յապոնիան, ուր 3 տարի առաջ տեղի ունեցավ ուժեղ յերկրաշարժ հրաբուխների հալված լավայի ժայթքումների հետ միասին. ուրիշ լեռնային շրջաններում, բարձր լեռնաշղթա-

Ների մոտերքը նկատվում են միայն ստո-  
րերկրյա հարվածներ մեծ կամ փոքր ուժի,  
վոր մենք անվանում ենք յերկրաշարժ։

Պատմական մարդու հիշողության մեջ  
Կովկասում տեղի յեն ունեցել միայն վեր-  
ջին տեսակի յերեռութներ, այսինքն յերկ-  
րաշարժեր, թեև շատ հեռավոր ժամանակ-  
ներում, յերբ Կովկասն ապրում եր իր լեռ-  
նային բարձրացման ամենաուժեղ շրջանը.  
Նրա հյուսիսային և հարավային լանջերի  
միքանի կետերում գործում երին միքանի  
խոշոր հրաբուխներ—Ելբրուս, Կազբեկ, Ա-  
լագյազ, Արարատ։

Վերջին տասնամյակներում Անդրկով-  
կասում յեղած խոշոր յերկրաշարժերը Շե-  
մախում, Ախալքալաքում, Գորում և վերջա-  
պես վերջին որերս Լենինականում ու նրա  
շրջակայքում, ինչպես և ուրիշ բազմաթիվ  
մանր ցնցումներ Կովկասյան լեռնաշղթայի  
հյուսիսային լանջերին և Անդրկովկասում,  
ապացուցում են, վոր յերկրագնդի կեղեի  
խորքերում տեղի յեն ունենում գեռնս լեռ-

նային զանգվածների տեղափոխություններ,  
վորոնք ընթացակցվում են կովկասյան  
լեռնաշղթայի դեռևս շարունակվող ձևակերպ-  
մանը:

Կովկասյան լեռնաշղթան, ինչպես և ու-  
րիշ լեռնաշղթաներ, որինակ՝ Ուրալը կամ  
Ալտայը, ներկայացնում են իրենցից լեռ-  
նային ծալիքը, վորոնք սեղմվում են յերկրի  
մակերեսույթի վրա, վերջինիս ծավալի դեռ-  
ևս շարունակվող կրճատման ժամանակ:

Կան լեռնային ծալքեր, վորոնք գոյացել  
են շատ առաջ, հարյուրավոր միլիոն տարի-  
ներ առաջ, ինչպես որինակ՝ Ուրալը, վորոնց  
մեջ վաղուց ի վեր վերջացել ե լեռնակազ-  
մությունը և, ուր տեղի չեն ունենում յերկ-  
րաշարժեր, մյուս լեռնաշղթաները, վորոնք  
գոյացել են ավելի նոր ժամանակներում և  
վորոնց թվին պատկանում ե կովկասը—  
յերկրի կեղեի խորքերում տեղի յեն ունե-  
նում լեռնային զանգվածների գալարումներ,  
կատարվում են լեռնային տեսակների, շեր-  
տերի կտրվածքներ, իջեցումներ, և ահա

այդ բնական յերեռւյթները կովկասյան  
լեռնաշղթայի խորքերից համնելով մինչեւ  
յերկրի մակերեռւյթը, մի վորեև վայրում  
Ախլքալաքում կամ Լենինականում կամ ու-  
րիշ տեղ, արտահայտվում են ուժեղ հար-  
վածներով, այսինքն՝ առաջ են բերում յերկ-  
րաշարժեր:

Սովորաբար գլխավոր կամ ամենաու-  
ժեղ հարվածից հետո հետագայում լինում  
են մի շարք ավելի փոքրիկ հարվածներ,  
վորից հետո կամաց-կամաց տեղի յե ու-  
նենում տվյալ շրջանի հանգստացումը:

Յերկրաշարժի մասին գրված այս փոք-  
րիկ գրքույկում բացատրում են այդ բնա-  
կան յերեռւյթների պատճառները և ցույց  
են տրվում այն գիտական միջոցները, վո-  
րոնց ոգնությամբ գիտությունն ուսումնա-  
սիրում ե յերկրի կեղեի մեջ տեղի ունե-  
ցող տատանումները:

Պրոֆ. Լենինական

Լենինական, 8-ին նոյեմբերի.

## ՅԵՐԿՐԱՇԱՐԺԸ ՅԵՎ ՆՐԱ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ուժեղ յերկրաշարժները հաճախակի չեն լինում. այն տեղերը, ուր լինում են այդպիսի յերկրաշարժեր, քիչ թե շատ հայտնի յեն: Ինչ վերաբերում ե թեթև ցնցումներին, նրանք տեղի յեն ունենում համարյա ամեն որ և ամեն տեղ: Հաճախակի տատանումներն այնքան թույլ են լինում, վոր մեծամասնությունը գործով զբաղված լինելու պատճառով նույնիսկ չի յել նկատում:

Այժմ բոլոր քաղաքակիրթ յերկրներում առանձին գործիքների միջոցով ուսումնասիրում են այդ յերեսույթները: Այդ նպատակի համար շինված գործիքները չափազանց բազմազան են ու բարդ, վորոնք կոչվում են սեյսմոգրաֆներ: Բոլոր խոշոր գիտական հիմնարկությունները՝ որսերվատորիաները սեյսմոգրաֆներ ունեն: Յերկրի ամենաթույլ տատանումներն անգամ ցույց են տալիս սեյսմոգրաֆները: Այդ գործիքները հազարավոր վերստեր տարածության վրա տեղի ունեցող յերկրաշարժները նշանակում են բոպեների, նույնիսկ վայրկյանների ընթացքում: Սեյսմոգրաֆով վորոշվում ե յերկրաշարժի ճիշտ ժամանակը և մոտավոր տեղը նախքան այդ մասին հեռագրական հաղորդակցություն ստանալը:

Նկատված ե, վոր յերկրաշարժերի քանակըն անսահման մեծ եւ Այսպես՝ 7 տարվա ընթացքում 1850—1857թ. թ. նշանակված ե 4,620 յերկրաշարժ, իսկ չնկատվածների թիվն անհամեմատ ավելի շատ ե:

Հավա կղզու վրա 1868թ. մարտ ամսին տեղի ունեցած 2000 յերկրաշարժ:

Յերկրի թեթև տատանումները լինում են վոչ միայն այն տեղերում, ուր յերկրաշարժերը հաճախակի յեն, այլև այնպիսի յերկրներում, ուր ուժեղ յերկրաշարժերը շատ քիչ են պատահում, որինակ՝ Գերմանիայում և Ռուսաստանում։ Վորոշ տեսակի յերկրաշարժերը թեև առաջ են բերում խոշոր ավերածություններ, բայց լայն տարածություններ չեն, գրավում։ Այդպիսի յերկրաշարժերի պատճառն ստորերկրյա փլուզումներն են—քանդվածները։

Յերկրի մեջ տարբեր խորքերում գոյություն ունեն խոռոչներ—դատարկ տարածություններ, փոսեր՝ լցված միայն ողով։ Այդպիսի խոռոչների մեծությունը լինում է տարբեր և յերբեմն հասնում ե հսկայական մեծության։ Պետք ե կարծել, վոր այն միջոցին, յերբ յերկիրը հանկարծակի իջնում ե այդ խոռոչների վրա, յերկրագնդի մակերեսութի վրա տեղի յեն ունենում չարաղետ դեպքեր—կատաստրոֆաներ։ Թե ի՞նչպես ե այդ կատարվում, կալարզվի հետեյալ որինակից։

Յերկրի գանազան վայրերում կան քարա-  
 ծուխի հանքեր։ Քարածուխը տարածվում է շեր-  
 տերով, վորոնց մեջ տեղափորված են հողային  
 շերտեր։ Քարածուխի հանքերում առաջ հանում  
 են վերի շերտը և հետո հանված քարածու-  
 խի տեղը դնում հաստ գերաններ—նեցուկներ՝  
 փլուզումների առաջն առնելու համար։ Քարածու-  
 խի առաջին շերտը հանելուց հետո, բանվորներն  
 անցնում են յերկրորդ շերտին և շատ զգուշու-  
 թյամբ հեռացնում նախորոք նեցուկ դրած գե-  
 րանները և սպասում, վոր հողի շերտը քանդվի։  
 Լեռնագործներն այդ անվանում են «կտուրը իջե-  
 ցընել»։ Ահա այդպիսի «կտուրներ» իջեցնելու ժա-  
 մանակ, մանավանդ մեծ շախտաներում, գետնի  
 մակերեսույթի վրա զգացվում ե ցնցում, վոր հի-  
 շեցնում ե թույլ յերկրաշարժ։ 1875 թ. Կյոնիգս-  
 գրուբե շախտայում կատարված փլուզումը («կը-  
 տուրն իջեցնելը») առաջ բերեց գետնի ուժեղ  
 ցնցում մեկ քառակուսի վերստ տարածության  
 վրա։ Միաժամանակ լսվեց ստորերկրյա դղրդյուն,  
 ինչպես այդ լինում ե իսկական յերկրաշարժերի  
 ժամանակ։ Շախտայի մոտ գետնի շարժումն ուղ-  
 ղահայաց եր. այդ պատճառով շատ առարկաներ  
 վեր եյին թոշում, ինչպես ոետինե գնդակ։ Շախ-  
 տայից հեռու ուղղահայաց շարժումը փոխարին-  
 վեց ալիքանման հանգիստ շարժման—«տները յե-

ըերում եյին ինչպես նավակներ ջրերի վրա»։ Ցընցումն սկզբում տեղի ունեցավ շախտայի վրա և ապա մի քանի ակնթարթ հետո տարածվեց շըրջակայքում։

Նման դեպքեր նկատված են և ուրիշ տեղերում, ուր կան քարածուխի հանքեր։ Այդ յերեսույթն առաջ բերեց այն միտքը, վոր վորոշյերկաշարժեր կարող են առաջ գալ նույն պատճառից, այսինքն յերկրի խորքում տեղի ունեցող փլուզումներից։ Յեթե շախտաներում մարդկանց ձեռքով կատարած փոքրիկ փլուզումներն առաջ են բերում յերկրի մակերեսույթի խոշոր տատանումներ, ուրեմն հասկանալի յե, վոր ավելի զորեղ ցնցումներ պետք ե առաջ բերեն յերկրի խորքում տեղի ունեցող մեծ փլուզումները, վորոնք հարյուր հազար անգամ ավելի ուժեղ են լինում։ Յերկրաշարժերը տեղի յեն ունենում 5–6, յերեմն 20 և շատ հազվագյուտ դեպքերում՝ 35 և ավելի վերստ խորությունից։ Յերկրաշարժի կինորոնի վորոշման նոր միջոցները թույլ են տալիս յենթադրելու, վոր այդ խորությունները հասնում են մինչև 100 և ավելի վերստերի։

Այնուամենայնիվ բացատրել բոլոր յերկրաշարժերը, մանավանդ այնպիսիները, վորոնք գրավում են հսկայական տարածություններ, անկարելի յեւ վկորովինետե ինչպես իմանալ, թե յեր-

կրի մակերևույթից ցած, տասնյակ վերստեր գետնի խորքերում վհրտեղից են սկսվում տատանումները, վորոնցից կարողանային գոյանալ ահոելի խոռոչներ, և, պահպանեյին իրանց գոյությունը:

Մեզ հայտնի չեն այն ուժերը, վորոնք առաջ են բերում նման խոռոչներ։ Աղետալի յերկրաշարժերը կազմում են չնչին թիվ գետնի տատանումների ընդհանուր քանակի մեջ։ Ամեն տեսակ շարժումներ—տատանումներ, զարկեր, հարվածներ ևայլն հաճախակի յերկրաշարժեր ունեցող վայրերում այնքան բազմաթիվ են, վոր գիտնականները կորցըել են իրանց հավատը յերկրի մակերևույթի կայունության և անշարժության վերաբերմամբ։ Յերկրի կարծը կեղել—նրա մակերևույթը շարժվում է, վորովհետեւ յերկրագունդը, այդ հսկա գնդաձև մարմինն «ապրում է», ուրեմն յենթակա յե փոփոխման։ Յերկրի խորքերի—շախտաների և թունելների վրա կատարած դիտողությունները, հրաբուխների ժայթականությունները, յերկրի համեմատությունը շիկացած քումները, յերկրի համեմատությունը շիկացած յերկնային մարմինների՝ արեգակի, Յուպիտերի հետ, բերում են այն կարծիքին, վոր յերկրագընդի խորքը գտնվում է շիկացած դրության մեջ։ (Գաղանման, հեղուկային կամ կարծրացած)։ (Գաղանման, հեղուկային կամ կարծրացած)։ Նույն նկատառումները պատկերացնում են յեր-

կրագնդի կյանքն իբրև աստիճանական սառեցման յերեսույթ։ Ամեն մի տաքացրած մարմին սառչում ե ամենից առաջ և ամենից շատ իր մակերեսույթի վրա։

Յերկրի մակերեսույթը կազմող զանգվածները մի ժամանակ, յեղել են շիկացած, հեղուկային վիճակում։ Սառեցման ընթացքում, յեղել ե մի ժամանակ յերբ յերկրի մակերեսույթի կեղեն սկսել ե ամրանալ։ Սկզբից փոքրիկ տարածություններով, հետո այդ տարածությունները մեծացել են լայնությամբ և խորությամբ զոդվելով—միանալով իրար հետ, վերջիվերջո ամբողջ յերկրի մակերեսույթը սառել ե կարծր կեղեսով, բարձրացած շերտերով։ Այդ շերտերի միջով ներքին ջերմությունը շարունակել ե դուրս գալ դեպի պաղ յերկինք և, յերկրի կեղեսը դանդաղ կերպով հաստացել ե. հայտնի յե նաև, վոր սառչող մարմինները սեղմվում են։ Ըստվորում հեղուկայիններն ավելի մեծ չափով են սեղմվում, քան կարծըրները. ել չենք խոսում գաղանման մարմինների մասին։

Յերբ յերկրագունդը ծածկվեց կեղեսով, կարծր շերտը չեր կարող սեղմվել և կրճատվել այնքան հավասարաչափ և նույնպիսի աստիճանի, ինչպես թանձր, նրանց տակը գտնվող լուծված, հալված զանգվածները, Յերկրի կեղեսը պետք եր կնճռոտ-

վեր, այսինքն՝ մի ծայրը մյուսի վրա ընկներ կամ, թե հանգուցավորվելով, կազմեր կապեր, անհավասարություններ, անհարթություններ. վոր այդպիսի՝ մեզ համար հսկայական, իսկ յերկրի համար չնշին ճեղքվածքներ և անհարթություններ գոյություն ունեն, դրա մասին չարժեխոսել. Այդպիսի անհարթություններ կարող ե տեսնել ամեն վոք՝ Ալպերում, Կովկասում, Ուրալում. Քանի վոր յերկիրն անդադար սառչում է, նույնքան ել անդադար հաստանում է նրա կեղել՝ ճաքճաքելով և ամբողջ տարածություններով ընկնելով ցած կամ կնճոռտվելով, դանդաղ և անկատելի կերպով կազմելով անհարթություններ։ Այլ խոսքով—յերկրագունդն ապրում է։ Նրա կեղելը շարժվում և տեղափոխվում է։

Պետք է յենթադրել, վոր այդ շարժումները կատարվում են յերկրի խորքերում ամենուրեք. բայց ավելի նկատելի յեն դրանք թույլ տեղերում, այսինքն այն տեղերում, ուր յերկրի հաստ կեղել վաղուց ի վեր կոտրված և ծռված է։ Այդտեղ կերպով Յերկրի կեղելի այդ կոտրտված թույլ տեղերը բարձր լեռնաշղթաները և ծռվերի խորություններն են։ Նոր աշխարհում՝ Ամերիկայում, անընդհատ լեռնաշղթան համարյա ընկած է հյուսիսից—հարավ. իսկ հին աշխարհում՝

նման ուղղության լեռների գոտու և ծովերի խորություններն անցնում են գլխավորապես արևմուտքից արևելք։ Յերկրի կեղևի կոտրտվածքի այդ գծերի շրջանում ե գլխավորապես տեղի ունենում յերկրաշարժը։ Պայթելով մարդկանց ընակավայրերում՝ մեր, փոքրիկ, համարյա աննկատելի արարածներիս մեջ, վորոնք ապրում են յերկրի մակերևույթի վրա, աննշան վայրկյաններ, համեմատած յերկրի կյանքի հետ, յերկրաշարժերը մեզ հասար սարսափելի աղետներ են, այն ինչ յերկրագնդի համար դրանք աննշան շարժումներ են, վորոնց բազմությունից կազմված են նրա կյանքը, մինչև նրա «մահը», այսինքն՝ յերբ նա բոլորովին կըսառչի, վորից հետո՝ միայն կըվերանան յերկրաշարժերը։ Թեև յերկրաշարժի ժամանակ յերկիրը շարժվում է վերու վար միայն աննշան չափերով, հազիվ մի քանի միլիմետր, բայց շարժման մեջ մտած յերկրային զանգվածների հսկայական սկզբությունն ու նրանց ամեն կողմ տարածվող ցնցումն առաջնում է փոքրիկ առարկաների մեջ սարսափելի քառու։ Ամեն ինչ փշովում է, քանդվում, ջարդվում։ Յեւ աննշան են, համեմատած յերկրի ցնցվող զանգվածների հետ, վոչ միայն մեր հոյակապ շենքերը, այլև այն լեռները, վորոնց զատաթները բարձրանում են դեպի յերկինք։

Յեվ այսպես՝ կործանիչ յերկրաշարժերը  
մեկ ակընթարթում հարյուր հազարավոր մարդ-  
կանց մահ են բերում, բայց եյապես հանդիսա-  
նում յերկրի խոր յերկար կյանքի նշանները:

Յերկրաշարժը մահվան ջղաձգություն չե,  
այլ կյանքի ցնցումն եւ Յերկրի վրա կան տեղեր,  
վորոնք շարունակ իջնում են դանդաղ կերպով  
սեղմվելու ժամանակ. այդ տեղերը ծանրության  
գործողությունից իրար նկատմամբ, կարծես թե,  
ավելի խտանում են: Այդ դեպքում շերտերը ճաք-  
ճըքում են: Սեղմեցեք ապակին, գետի սառույցը  
և դուք կըտեսնեք, վոր ապակին և սառույցը  
ճեղքվածքներ են տալիս, վորոնք սկսվում են  
մեկ կետից և տարածվում շրջագծերով: Ստաց-  
վում եւ սարդի վոստայնի ձև: Սեղմեցեք նորից  
ու նորից: Ամեն ճնշումի ժամանակ առաջ են  
գալիս նոր ճեղքումներ, իսկ հները մեծանում:  
Յերբ սեղմվելու ազդեցության տակ յերկրի կե-  
ղեի մասերն իջնում են ցած, նրանք նույնպես  
առաջացնում են ճեղքվածքներ: Կան տեղեր, ուր  
ճեղքվածքների ուղղությունները կարելի յե վո-  
րոշել: Այսպես որինակ՝ Տիրրենյան ծովի ամբողջ  
հարավային մասը կալամբրիայի և Սիկիւլիայի  
ափերով իջման և կաթսայտձև շրջան եւ: Հարկ  
չկա կարծելու, վոր այդ ճեղքվածքները յերեւմ  
են: Դրանք առաջինը՝ բազմաթիվ են ամեն ուղղու-

թյամբ և ամբողջ սիստեմաներ, յերկրորդ՝ նրանք  
իրար սերտ միացած են ու ծածկված են, ծեծ-  
ված ու աղացած տեսակներով, վորոնք միաց-  
վում են նրանց մեջ անցնող ջրի միջոցով:

Հաճախակի այն տեղերում, վորտեղից ան-  
ցնում են ճեղքվածները, հատկապես այնտեղ, ուր  
կենտրոնից անցնող ճեղքվածքները հանդիպում  
են շրջագծային ճեղքվածների, կենտրոնացած են  
լինում հրաբուխներ։ Այստեղ յերկրի խորքերում  
շիկացած մասսաները հեշտությամբ յելք են գըտ-  
նում դեպի դռւրս։ Այսպես, որինակ՝ վերև հիշված  
Տերրինյան ծովի կաթսայում, վորտեղից ճառա-  
գայթների նման ամեն կողմ գնում են ճեղքված-  
ները, ծովի միջից բարձրանում են Լիպարյան  
կղզիների հրաբուխները, (Ստրոմբոլի, Վուլկանո և  
ուրիշներ)։ Իսկ շրջապատում, իտալիայի այն շըր-  
ջանի հողամասի վրա, ուր ամենից հաճախ տեղի  
յեն ունենում յերկրաշարժեր, կանգնած են վե-  
ղուվը և Ետնան։ Կարելի յե հարց տալ, թե ինչու  
համար հաճախակի յերկրաշարժեր ունեցող այլ  
յերկրներում, որինակ՝ Վերնի քաղաքի շրջակա-  
ներում չկան հրաբուխներ։ բացատրում ե այդ  
նրանով, վոր հրաբխային ժայթքումների մեջ  
միշտ մասնակցում ե ջուրը, վորի գոլորշիները  
մասսաներով միշտ դռւրս են գալիս հրսորխից,  
ինչպես գոլորշու կաթսայից, յերբ բաց են անում

իսցանը — համաձայն այդ բացատրության՝ հրաբուխային գործունելությունը պահանջում է ծովի հարևանությունը, վորի ջուրը, շնորհիվ կեղևի ճեղքվածքների, ճանապարհներ գտնելով դեպի յերկրի խորքերը, հասնում է շիկացած մասերին և վերածվում գոլորշու։

*Ա 3972*

Այդպիսով յերկրի տատանումների պատճառը հրաբուխները չեն. և իսկապես, 1908 թվի Մեսսինայան յերկրաշարժի ժամանակ Վեզուվը, Ետնան և Ստրոմբոլին մնացին բոլորովին հանգիստ թե յերկրաշարժից առաջ և թե հետո։

*ՀՅԵ* Հակառակն՝ յերկրաշարժից յերկրի մեջ առաջացած փոփոխությունները կարող են ազդել հրաբուխային գործունելության վրա։ Բայց մինչև այժմ յերկրաշարժերի և նրանց տարածման շըրջանի մեջ գտնվող հրաբուխների գործունելության մեջ վորոշ կերպով անմիջական և ուղղակի կապ չի նկատված։ Յերկրաշարժերը հաճախակի տեղի յեն ունենում յերկրագնդի կեղևի բեկման գլխավոր գծերի սիստեմի շուրջը՝ տեղավորված քիչ թե շատ լայն շրջաններում։ Հին Աշխարհին այդ շրջանը գրավում է Միջերկրական ծովը, նրա ափերը, փոքր Ասիան, Կովկասը և այստեղից անցնում է Ասիայի վրայով արևելք ու հյուսիս արևելք (Չինաստան և Անդր Բայկալ), հարավ արևելք, (Միջագետք—Հնդկաստան) ու հարավ

(Պաղեստին և ապա ավելի հարավ դեպի Աֆրիկայի խորքերը):

Բեկման գծեցի մյուս զլիսավոր սիստեմն անցնում է Ամերիկայի Խաղաղ օվկիանոսի ափով և տարածվում ովկիանոսի տարբեր մասերի վրա: Վորովհետեւ Խաղաղ օվկիանոսում գտնվում են ամենամեծ խորություններ և նրանցից ամենախոշոր տեղավորված են ճապոնական արևելյան ափերի մոտ, պետք են կարծել, վոր յերկրի կեղեկի ամենամեծ ծալվածքները գտնվում են հենց այստեղ: Ճապոնական արշիպելագոսի արևմտյան կողմում տեղավորված են Ճապոնական և Չին-արեվելյան ծովերի դեռևս ցածրացող կաթսաները: Ճապոնական կղզիները դուրս են ցցված այդ յերկու իջնող տարածությունների մեջտեղը և գտնվում են ամենալուսավոր և անհանգիստ տեղում: Ճապոնիան յերկրաշարժերից ամենից շատ տռաժող յերկիրն եւ այնտեղ միջին թվով տարեկան լինում է 600 յերկրաշարժ, այսինքն՝ որական յերկու յերկրաշարժ:

Յերկրաշարժերին հաճախակի յենթակայերների փորձը և կատարված դիտողությունները ցույց տվին, վոր յերկրաշարժերն ամենուրեք հավասարաչափ կործանիչ են, բայց պատահում են, վոր որինակ քաղաքի մի մասը բռնորովին քանդվում են, մյուս մասը տուժում են ավելի

քիչ։ Դրա պատճառը, սովորաբար լինում ե այն վոր քաղաքի պակաս տուժած մասը շինված ե յեղել ամուր շերտի վրա, որինակ՝ գրանիտի վրա, յերկրաշարժն առանձնակի ուժով գործել ե այն-տեղերում ու շենքերի տակ, ուր փափուկ շերտեր են յեղել, որինակ՝ ավազ։ Լիսսաբոնի (Պորտուգալիա) յերկրաշարժի ժամանակ՝ քաղաքի բարձր մասում, վոր շինված եր կարծը կրաքարի վրա, քանդվեց շատ քիչ տուն, այն ինչ ափի մոտ շենքերը բոլորն ավերվեցին։

Ճապոնիայում Զոշի կոչված տեղում յերկրաշարժեր քիչ են պատահում, թեև շրջապատում հաճախակի յեն լինում ուժեղ ցնցումները Ուսումնասիրությունները ցույց տվին, վոր այս-տեղ փափուկ շերտերի մէջ գտնվում ե ամուր ժայռ։

Բայց յեթե թույլ շերտերը հաստ են, յերկրաշարժի ժամանակ վտանգը պակաս ե լինում։ Այնտեղ, ուր տեղի յե ունենում յերկրաշարժ, յերբն պատահում են հողամասեր, վորոնք քիչ են յենթարկվում ստորերկրյա հարվածների ազդեցության, նրանք կոչվում են յերկրաշարժի կըդգության, նրանք կոչվում են յերկրաշարժի կըդգիներ, վորովհետև մնում են հանգիստ այն ժամանակի, յերբ ամբողջ շրջապատը նմանվում են հուզության, ված ծովի, կենտրոնական Ամերիկայում նրանք կոչվում են յերկրաշարժի կամուրջներ, ճապո-

նայում այդ վայրերը շատ թանկ են գնահատվում:

Յերկրաշրժի այդպիսի կամուրջ և Կապը կղզին Նիապոլի մոտ, չնայած հարեան Կալաբրիայի և Սիցիլիայի բազմաթիվ յերկրաշրժերին, այստեղ յերբեք տեղի չի ունեցել կործանիչ յերեվույթներ։ Դեկտեմբերի 28-ի ստորերկրյա հարվածները, վորոնք կործանեցին Մեսսինան, զգացվեցին և Կապըի յում, բայց այնքան թույլ, վորշատերը չզգացին։ Հայտնի յենույնպես, վոր այն շենքերը, վորոնց տակ յեղել են մեծ քարանձավներ, խոռոչներ կամ դատարկ տարածություններ, տուժել են շատ քիչ, ինչպես և խոր փոսերով շրջապատված շենքերը։ Պլինիոսը պատմում է, վոր Հռոմի ազատվեց յերկրաշրժից նրա համար, վոր նրա տակ գտնվում են գերեզմանահորեր (կատակոմբաներ)։ Թավրիզի բնակիչները, մի խոշոր յերկրաշրժից հետո, վոր կոտորեց 100,000 մարդ, իրենց զիտնականների խորհըղով փորեցին մի շարք խորը հորեր։

Շատ կենդանիներ, հատկապես ընտանի կենդանիներ, կարծես, թե նախազգում են յերկրաշրժը, նրանք ցուցահանում են չափազանց մեծ անհանգստության նշաններ։ Ճշում են, վազում առաջ և յետ, հրաժարվում կերակրից։ Ասն — Ռեմոյի Մենտոնում վերջերս տեղի ունեցած

յերկրաշարժի ժամանակ առաջին հարվածից մեկ  
ժամ առաջ մի քանի ձիյեր հրաժարվեցին կե-  
րից, իսկ շներն աղեկտուր վոռնում եյին: Ֆլո-  
րենցիայում մի անգամ թույլ յերկրաշարժ ե-  
պատճիռում, վորը վոչ վոք չի նկատում, այդ  
յերկրաշարժի մասին իմացվում ե արսերվատո-  
րիայի հատուկ գործիքների միջոցով: Մի տան  
մեջ պահվող թութակը յերկրաշարժից առաջ  
ցույց ե տվել մեծ անհանգստություն:

Յերկրաշարժի տեղի ունենալու նախազգացումները ունենում են կատուները, շները և այլ կենդանիներ։

թե, իրոք, կենդանիներն ինչ վոր նշան-  
ների միջոցով զգում են վերահաս աղետը, այ-  
նուամենայնիվ նրանց վրա հիմնվելով, դժվար ե-  
ճիշտ յեզրակացություններ հանել։ Այդպիսի տե-  
ղեկություններին պետք է վերաբերվել զգուշու-  
թյամբ։

Հայտնի յենասե, վոր ծառերը, սովորաբար,  
յերկրաշարժից վնաս չեն կրում: Բնությունն  
ավելի լավ հոգացողություն ե ցույց տալիս դե-  
պի իր այն ստեղծագործությունները, վորոնք  
հանձնված են նրա անմիջական պաշտպանության.  
ամենառուժեղ փոթորիկը կամ յերկրաշարժը հեշտ  
կերպով չեն կարող պոկիլ կամ վայր ձգել ամե-  
նաբարձր ծառերն անգամ: «Մեսսինայում, ասում

ե պրոֆ. Մեյերը, յես չեմ տեսել մի ծառ կամ թուփ, վորը յերկրաշարժից ընկած լիներ, յեթե նրանք միայն չեն ջարդված յեղել խորտակվող շենքերից: Յես չեմ տեսել նույնիսկ այնպիսի ծառեր, վորոնք իրենց ուղղահայաց դիրքից դուրս յեկած լինելին»:

Շատերը կարծում են, վոր յերկրաշարժերը վերջին ժամանակները դառնում են ավելի հաճախակի, բայց այդ ճիշտ չե: Իրոք վերջին ժամանակները յերկրաշարժի մասին ավելի շատ ե խոսվում, ավելի շատ ե լսվում, բայց այդ նրանից ե առաջանում, վոր մեր ժամանակներում ավելի ուշադիր են՝ դեպի յերկրաշարժերը: Շատ յերկրներում գիտնականներն իրենց հատուկ գործիքների միջոցով նկատում են նույնիսկ յերկրի ամենաթույլ տատանումները, վորոնց մասին, շնորհիվ հեռագրի և լրագրի, անմիջապես իմանում են ամենքը:

Առաջներում մարդիկ իմանում ենին միմիայն շատ ուժեղ յերկրաշարժերի մասին, մինչդեռ յերկրաշարժերն առաջներում ես յեղել են այնպիս հաճախակի, ինչպես և այժմ: Շատ տարեզը բությունների և հին ժամանակագրությունների մեջ նկարագրված են այդպիսի շատ դեպքեր, նույնիսկ այնպիսի յերկրների նկատմամբ, վորոնց մասին մենք քիչ ենք լսում: Այդպիսի տեղե-

կություններ մեզ հասել են շատ հին անցյալից։  
Ասորական Ասուր Բանիպալ թագավորի մատե-  
նադարանում, վորը գտնվել ե Նինվե քաղաքի  
ավերակներում՝ պահպանվել և աղյուսի վրա  
«Գիշ-Դուրար» խորագրով պոյեմա 12 յերգով։  
Յերգերից մեկի մեջ նկարագրված ե մի մեծ հեղեղ,  
վոր պետք ե կարծել, առաջ ե յեկել յերկրաշար-  
ժից։ Ահա պոյեմայի բովանդակությունը։

Գիշ-Դուրար դյուցազնը գնում ե Յեփրատ  
և Տիգրիս գետերի ակունքների մոտ, ուր նրա  
նախահայրը Խասիս-Աղրան, վորն աստված եր  
դարձել իր անրիծ վարքի համար՝ անմահացած  
եր։ Խասիս Աղրան պատմում ե Գիշ-Դուրարին իր  
կյանքը և թե ինչպես նա փրկվել ե հեղեղից։  
«Մեծ աստվածները վորոշել եյին կործանել հե-  
ղեղով Յեփրատի ակունքների մոտ գտնվող Սուր-  
բիպակ հին քաղաքը։ Ծովերի Եա աստվածը նա-  
խազգուշացնում ե Խասիս Աղրային։ Նա խորհուրդ  
և տալիս նրան կառուցել տապան և ստնել նրա  
մեջ իր ընտանիքով, ունեցվածքով և անասուն-  
ներով։ Փոքր տատանումից հետո Խասիս-Աղրան  
շինում ե տապանը, ձիթով պատում ե նրան, առ-  
նում ե իրեն հետ ուտելիքներ և ընտանի կեն-  
դանիներ։

Յեվ ահա բարձրանում ե փոթորիկը, ջուրը  
բարձրանում ե յերկրից և յեղանակի աստվածը

քշում ե ջրերը։ Խավարը պատում ե, վեց որ և 7  
զիշեր տեսում ե կործանումը։ Հետո փոթորիկը  
դադարում ե, որը պարզվում, ջուրը պակասում և  
վերջապես Խասիս Աղբայի նավակը կանգ է առնում  
Նիզիր սարի գագաթին—Նինվեյի մոտ։ Խասիս-  
Աղբան արձակում է թոչուններ. մեծ աստված Բելը  
յերդվում ե, վոր այլևս ջրհեղեղ չի լինի։ Աստվա-  
ծունի Իստարն, ի հաստատություն նրա խոսքերի  
ճգում ե յերկնքի վրա Անի աղեղը (ծիածանը)։»

Պոյեման շատ ե հիշեցնում աստվածաշնչի  
նկարագրած մեծ ջրհեղեղը, վորը, յեթե յեղել ե  
յերկը վոչ մեծ տարածության վրա, նա առա-  
ջացել ե վոչ թե անձրևներից, այլ ուժեղ յեր-  
կրաշարժի հետևանքով առաջացած ծովի հեղե-  
ղումից։



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038810

[054]



ԳԻՆՆ Ե 10 ԿՈՎԵ